# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

0009, ք.Երևան, Կորյունի 17

№ ______

« » **դեկտեմբերի 2020թ.**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

*Հարգելի՛ պարոն Միրզոյան,*

Ազգային ժողովի աշխատակազմի աշխատակցի կողմից հեռախոսակապի միջոցով տեղեկատվություն է փոխանցվել առ այն, որ սույն թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 10.00-ին Ազգային ժողովի լիագումար նիստի օրակարգում ընդգրկված են Վճռաբեկ դատարանի նախագահի և Վճռաբեկ դատարանի դատավորի ընտրության հարցերը և Ազգային ժողովի նիստում իմ կողմից պետք է իրականացվի հիշյալ պաշտոններում Բարձրագույն դատական խորհրդի կողմից առաջադրված թեկնածուների ներկայացման գործընթացը:

Մի կողմ թողնելով վերոգրյալի մասին իրազեկման եղանակի անընդունելի և փոխանցված տեղեկատվության թերի ու ոչ ամբողջական լինելու հանգամանքը (Աժ մուտքը և այլ արարողակարգային հարցեր)՝ քննարկման ենթակա հարցերի մասին տեղեկացվել են նաև Վճռաբեկ դատարանի նախագահի թեկնածու Լիլիթ Թադևոսյանը և Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուներ Արսեն Մկրտչյանը, Արմեն Հայկյանցը և Սամվել Գրիգորյանը:

Վճռաբեկ դատարանի նախագահի և Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուները դիմելով ինձ՝ տեղեկացրել են, որ Ազգային ժողովի լիագումար նիստում իրենց տեսլականը ներկայացնելիս պետք է խոսեն նաև Դատական իշխանության

կայուն զարգացման հեռանկարների և համակարգի առջև ծառացած խնդիրների վերաբերյալ: Այդ հարցերը վերաբերում են նաև դատավորների իրավական և սոցիալական երաշխիքների ապահովմանը, դատարանների ծանրաբեռնվածության կրճատման նպատակով դատավորների հաստիքների ավելացման անհրաժեշտությանը, դատարանների շենքային և նյութատեխնիկական պայմաններին և այլնին: Հակառակ պարագայում, չխոսելով Դատական իշխանության համակարգի առջև ծառացած խնդիրների և դրանց լուծման ուղիների մասին, իրենք չեն կարող, որպես թեկնածուներ, պատշաճ և ամբողջական կերպով ներկայացնել իրենց հավակնությունը թափուր պաշտոնների համալրման համար:

Հաշվի առնելով հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված ներկայումս հասարակության առջև հառնած անհետաձգելի, առաջնահերթ ու հրատապ լուծումներ պահանջող հարցերի շրջանակը, իրատեսական չէ Դատական իշխանությանը հուզող հիշյալ հիմնախնդիրների շուրջ կառուցողական և արդյունավետ քննարկում կազմակերպելը:

Վճռաբեկ դատարանի նախագահի և Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուները մտահոգություն են հայտնել նաև Ազգային ժողովի խմբակցությունների հետ հանդիպումներ չունենալու կապակցությամբ, ինչի կազմակերպումը նրանք կարևորում են՝ որպես բովանդակային քննարկումներ անցկացնելու կարևոր հարթակ:

Վերոգրյալի լույսի ներքո հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված «Իրավունքի գերակայության պահպանությունը գնահատելու հսկիչ հարցերի ցանկ»-ի 2-րդ բաժնի Ե գլխի 1-ին կետով, ԵԴԽԽ (Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ) թիվ 7 Կարծիքի 27-րդ պարբերությամբ, ԵԴԽԽ թիվ 18 Կարծիքի 52-րդ պարբերությամբ ամրագրված դրույթների համաձայն՝ դատավորների ընտրությունները պետք է կատարվեն օբյեկտիվ և կանխատեսելի չափանիշների հիման վրա, հակառակ դեպքում կարող է վտանգվել դատավորի անհատական անկախությունը՝ կասկածի տակ դնելով նրա անաչառությունը, ինչպես նաև կարող է խաթարվել Դատական իշխանության նկատմամբ հանրային վստահությունը:

Հիմք ընդունելով Սահմանադրության 173-րդ հոդվածը, վերոգրյալ մարմինների կողմից ընդունված փաստաթղթերով սահմանված չափանիշների պահպանման կարևորությունը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի նախագահի և Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուների մոտեցումները՝ խնդրում եմ հետաձգել Վճռաբեկ դատարանի նախագահի և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի ընտրության հարցը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ *այս պահին* Վճռաբեկ դատարանի նախագահի չընտրելը և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի թափուր հաստիքը չհամալրելը չի կազմալուծի Վճռաբեկ դատարանի և հիշյալ պալատի աշխատանքների կազմակերպումը:

**Հարգանքով՝**

**Ռ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**